ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԱԹԹԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ (ՀԱՐԱՎ-ՈՍԵԹԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ), ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

342.8
Վ-94

«ՀԱՐՑԱ. ՎՈՍՏՈՒԿ»
Թբիլիսի — 1939

3967-39

342.3
Ա-94

05 JAN 2010
01 MAR 2010
26 SEP 2006

ՕՐԵՆՔ

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ (ՀԱՐԱՎ-ՈՍԵԹԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ), ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՑԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

Հաստատել Վրացական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը։

Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի
Նախագահության Նախագահ՝ Ֆ. Մախարաձե

Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի
Նախագահության քարտուղար՝ Վ. Եգնատաշվիլի

Թբիլիսի
23 հուլիսի 1939 թ.

3967-39

12 AUG 2013

35.705

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ (ՀԱՐԱՎ-ՈՍԵԹԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ), ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ I.

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Հոդված 1։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 147 հոդվածի հիման վրա աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների դեպուտատների ընտրությունները ընտրողները կատարում են ընդհանուր, հավասար յեվ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ։

Հոդված 2։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 148 հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրություններն ընդհանուր են. Վրացական ԽՍՀ 18 տարեկանի հասած բոլոր քաղաքացիները, անկախ ռասայական յեվ ազգային պատկանելիությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակյացությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից յեվ անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին յեվ ընտրվելու աշխատավորների դեպուտատների Խորհուրդներում, բացառությամբ խելագարների յեվ այն անձերի, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով։

Հոդված 3։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 149 հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրությունները հավասար են, յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն։ Բոլոր քաղաքացիները ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով։

Հոդված 4։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 150 հոդվածի հիման վրա կանայք տղամարդկանց հետ համահավասար ոգտվում են ընտրելու յեվ ընտրվելու իրավունքով։

Հոդված 5։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 151 հոդվածի հիման վրա Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիները բոլոր քաղաքացիների հետ համահավասար ոգտվում են ընտրելու յեվ ընտրվելու իրավունքով։

Հոդված 6։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 152 հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրությունները ուղղակի յեն. աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների դեպուտատների ընտրությունները ընտրողները կատարում են անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով։

Հոդված 7։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 153 հոդվածի հիման վրա Վրացական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների ընտրություններում քվեարկությունը գաղտնի յե։

Հոդված 8։ Վրացական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական ոկրուգների։

Յուրաքանչյուր ընտրական ոկրուգ աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհուրդն ե ուղարկում մեկ դեպուտատ։

Հոդված 9։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի հիման վրա բոլոր մյուս միութենական հանրապետությունների քաղաքացիները Վրացական ԽՍՀ տերիտորիայում ոգտվում են Վրացական ԽՍՀ քաղաքացիների հետ համահավասար ընտրական իրավունքներով։

Հոդված 10։ Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրությունների անցկացման կարգը Աբխազական յեվ Աջարական ինքնավար հանրապետություններում սահմանվում ե Աբխազական յեվ Աջարական ինքնավար հանրապետությունների աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրությունների Կանոնադրության համապատասխան։

Հոդված 11։ Վրացական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրություններն անցկացնելու հետ կապված ծախսերը կատարվում են պետության հաշվին։

ԳԼՈՒԽ II.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Հոդված 12։ Ընտրողների ցուցակները քաղաքներում կազմում ե աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդը. Թբիլիսում՝ շրջանային Խորհուրդը. ավաններում՝ ավանային Խորհուրդը. գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների գյուղական Խորհուրդը։ Ընտրողների ցուցակների ձեվը սահմանում ե Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը։

Հոդված 13։ Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ընտրությունների որը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, վորոնք ունեն ընտրական իրավունք յեվ ցուցակները կազմելու մոմենտին ապրում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ Խորհրդի տերիտորիայում։

Հոդված 14։ Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն

անձերը, վորոնք դատական վճիռներով զրկված են ընտրական իրավունքներից՝ ընտրական իրավունքներից զրկելու վերաբերյալ դատավճռի մեջ սահմանված ամբողջ ժամկետի ընթացքում, ինչպես յեվ այն անձերը, վորոնք որենքով սահմանված կարգով խելագար են ճանաչված։

Հոդված 15։ Ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել ավելի, քան մեկ ընտրական ցուցակի մեջ։

Հոդված 16։ Ընտրողների ցուցակները, վորոնք ընդհանուր են աշխատավորների դեպուտատների բոլոր Խորհուրդների ընտրությունների համար, կազմվում են ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի՝ այբբենական կարգով, մատնանշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնակության տեղը, ինչպես յեվ աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների համարները։ Ընտրողների ցուցակները ստորագրվում են աշխատավորների դեպուտատների Խորհրդի նախագահի յեվ քարտուղարի կողմից։

Հոդված 17։ Զորամասերում և զորային միավորումներում գտնվող ընտրողների ցուցակները կազմում ե հրամանատարությունը՝ հրամանատարի յեվ զինվորական կոմիսարի ստորագրություններով։ Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ըստ բնակության վայրի՝ աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհուրդների կողմից։

Հոդված 18։ Հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին յեվ այլ բուժական հիմնարկություններին կից ստեղծված ընտրական տեղամասերի ընտրողների ցուցակները կազմվում են ինչպես հիվանդ քաղաքացիների, այնպես յեվ ընտրությունների որն որապահություն անող բժշկական անձնակազմի համար։

Ընտրություններին չեն կարող մասնակցել այն հիվանդները, վորոնք գտնվում են քութեշի յեվ դիֆտերիտի բաժանմունքներում։

Հոդված 19։ Ընտրություններից 35 որ առաջ աշխատավորների դեպուտատների Խորհուրդը ընդհանուրի դիտողության համար կախում ե ընտրողների ցուցակները, կամ ընտրողների համար հնարավորություն ե ապահովում ծանոթանալու այդ ցուցակներին՝ Խորհրդի շենքում։

Հոդված 20։ Ընտրողների ցուցակների ընագիրը պահվում ե համապատասխան կերպով՝ աշխատավորների դեպուտատների Խորհրդում յեվ զորամասերում կամ զորային միավորման մեջ։

Հոդված 21։ Այն դեպքում, յերբ ընտրողը՝ ընտրողների ցուցակը հրապարակվելու յեվ ընտրությունների որվա միջեվ ընկած ժամանակամիջոցում փոխում ե իր բնակության վայրը, աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհուրդը, Վրացական ԽՍՀ

Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով, նրան տալիս ե «քվեարկության իրավունքի վկայական» յեվ ընտրողների ցուցակի մեջ նշում ե. «մեկնեց». նոր բնակավայրում՝ մշտական կամ ժամանակավոր՝ ընտրողը մտցվում ե ընտրողների ցուցակի մեջ, անձնական վկայական, ինչպես նայեվ «քվեարկության իրավունքի վկայական» ներկայացնելու դեպքում։

Հոդված 22։ Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու (ցուցակի մեջ չմտցնելը, ցուցակից հանելը, ազգանվան, անվան, հայրանվան աղավաղելը, ընտրական իրավունքներից զրկված անձերի սխալ կերպով ցուցակի մեջ մտցնելը) վերաբերյալ հայտարարությունը տրվում ե աշխատավորների դեպուտատների այն Խորհրդին, վորը հրապարակել ե ցուցակը։

Հոդված 23։ Աշխատավորների դեպուտատների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր ե ընտրողների ցուցակի անճշտություն լինելու վերաբերյալ յուրաքանչյուր հայտարարությունը քննել 3 որվա ժամկետում։

Հոդված 24։ Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ հայտարարությունը քննելիս, աշխատավորների դեպուտատների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր ե կամ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտրողների ցուցակի մեջ, կամ հայտարարություն տվողին գրավոր տեղեկանք տալ նրա հայտարարությունը մերժելու շարժառիթների մասին. աշխատավորների դեպուտատների Խորհրդի վորոշմանը համաձայն չլինելու դեպքում, հայտարարություն տվողը կարող ե բողոք ներկայացնել Ժողովրդական դատարանին։

Հոդված 25։ Ժողովրդական դատարանը պարտավոր ե յերեք որվա ընթացքում դռնբաց դատական նիստում, կանչելով հայտարարություն տվողին յեվ Խորհրդի ներկայացուցչին, քննել ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ բողոքը յեվ իր վորոշումը անհապաղ հայտնել ինչպես հայտարարություն տվողին, այնպես եվ Խորհրդին։ Ժողովրդական դատարանի վճիռը վերջնական ե։

ԳԼՈՒԽ III.

ՀԱՐԱՎ-ՈՍԵԹԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 26։ Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների կազմակերպումը կատարում ե աշխատավորների դեպուտատների մարզային Խորհուրդը։

Վրացական ԽՍՀ Սահմանադրության 77 հոդվածի հիման վրա՝ Հարավ-Օսեթիայի ինքնավար մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները կազմակերպում են 2.000 հոգի բնակչությանը մեկ ոկրուգ նորմայով։

Հոդված 27։ Հարավ-Օսեթիայի ինքնավար մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակները հրապարակում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի գործադիր կոմիտեն, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 28։ Հարավ-Օսեթիայի ինքնավար մարզում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների Մարզային ընտրական հանձնաժողով։

Հոդված 29։ Մարզային ընտրական հանձնաժողովը կազմակերպվում է հասարակական կազմակերպությունների ու աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ հաստատվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի յեվ 8—10 անդամների կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 30։ Մարզային ընտրական հանձնաժողովը.

ա) հետեվում է ինքնավար մարզի ամբողջ տերիտորիայում աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընթացքում ընտրությունների [ներկա Կանոնադրության անշեղ կատարմանը.

բ) քննում է ընտրական հանձնաժողովների վոչ ճիշտ գործողությունների վերաբերյալ գանգատները յեվ վերջնական վորոշումներ է կայացնում գանգատների նկատմամբ.

գ) պատրաստում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների համար ընտրական բյուլետենները Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձեվով.

դ) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդում ընտրված դեպուտատներին.

յե) հանձնում է ընտրությունների գործավարությունը աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի մանդատային հանձնաժողովին։

Հոդված 31։ Աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում է Ոկրուգային ընտրական հանձնաժողով։

Հոդված 32։ Աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմակերպվում են հասարակական կազմակերպությունների յեվ աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից ու հաստատվում աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի գործադիր կոմիտեի կողմից՝ նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի յեվ 4—6 անդամների կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

Հոդված 33։ Աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը.

ա) սահմանում է ընտրական տեղամասերի հերթական համարները.

բ) ցուցակագրում է առաջադրվածներին՝ հետեվելով Վրացական ԽՍՀ Սահմանադրության պահանջներին յեվ աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի դեպուտատի թեկնածուների ընտրության ներկա Կանոնադրությանը.

գ) մատակարարում է սահմանված ձեվով ընտրական բյուլետեններ տեղամասային ընտրական հանձնաժողովներին.

դ) սահմանում է ընտրությունների արդյունքները ոկրուգում.

յե) տալիս է ընտրված դեպուտատին ընտրված լինելու վերաբերյալ վկայական.

զ) ներկայացնում է ընտրությունների գործավարությունը Մարզային ընտրական հանձնաժողովին։

ԳԼՈՒԽ IV.

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 34։ Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգները կազմում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդները։

Ընտրական ոկրուգները Վրացական ԽՍՀ Սահմանադրության 86 հոդվածի հիման վրա կազմվում են հետեվյալ նորմաներով.

25.000 հոգուց ավելի բնակչություն ունեցող շրջանում՝ բնակչության յուրաքանչյուր 1.000 հոգուն ընտրական մեկ ոկրուգ, սակայն, 60 ոկրուգից վոչ ավելի.

մինչեվ 25.000 հոգի բնակչություն ունեցող շրջանում կազմվում են ընտրական 25 ոկրուգ։

Հոդված 35։ Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակները հրապարակում են աշխատավորների դեպուտատների Խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեները վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 36։ Յուրաքանչյուր շրջանում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների վերաբերյալ Շրջանային ընտրական հանձնաժողով։

Հոդված 37։ Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ հաստատվում են Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, իսկ Հարավ-Օսեթիայի ինքնավար մարզի տերիտորիայում՝ աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի կողմից հետեվյալ կազմով՝ նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար և 4—6 անդամ, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 38։ Շրջանային ընտրական հանձնաժողովը.

ա) հետեվում է շրջանի տերիտորիայում շրջանային Խորհրդի ընտրությունների ընթացքում ընտրությունների վերաբերյալ ներկա կանոնադրության անշեղ կատարմանը.

բ) քննում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների վոչ ճիշտ գործողությունների դեմ ստացված բողոքները.

գ) հետեվում է, վոր ընտրողների ցուցակները ժամանակին կազմվեն յեվ հասցվեն ի գիտություն ընդհանուրի.

դ) հետեվում է, վոր աշխատավորների դեպուտատների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեները ժամանակին կազմակերպեն ընտրական տեղամասերը, իսկ հանրապետական յենթարկման շրջանների տերիտորիայում սահմանում է ընտրական տեղամասերի համարներն ըստ կարգի.

յե) պատրաստում է՝ ընտրական բյուլետեններ՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների վերաբերյալ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձեվով,

զ) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի համար ընտրված դեպուտատներին.

ե) ընտրությունների վերաբերյալ գործավարությունը հանձնում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի մանդատային հանձնաժողովին։

Հոդված 39։ Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների վերաբերյալ յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում է Ոկրուգային ընտրական հանձնաժողով։

Հոդված 40։ Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների յեվ աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ

հաստատվում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից հետեվյալ կազմով՝ նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար յեվ 2—4 անդամ, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

Հոդված 41։ Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը.

ա) պահպանելով Վրացական ԽՍՀ Սահմանադրության յեվ ընտրությունների վերաբերյալ ներկա Կանոնադրության պահանջները, ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի համար՝ վորպես դեպուտատ առաջադրված թեկնածուներին.

բ) Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է սահմանված ձեվի ընտրական բյուլետեններ.

գ) սահմանում է ընտրությունների արդյունքներն ըստ ոկրուգի.

դ) ընտրված դեպուտատին վկայական է տալիս ընտրված լինելու մասին.

յե) ընտրությունների գործավարությունը ներկայացնում է Շրջանային ընտրական հանձնաժողովին։

ԳԼՈՒԽ V.

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 42։ Աշխատավորների դեպուտատների քաղաքային յեվ քաղաքներում գտնվող շրջանների Խորհուրդների ընտրական ոկրուգներն ստեղծվում են աշխատավորների դեպուտատների համապատասխան քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհուրդների կողմից։

Ընտրական ոկրուգները Վրացական ԽՍՀ Սահմանադրության 87 հոդվածի հիման վրա կազմվում են ըստ հետեվյալ նորմաների.

12 հազարից մինչեվ 100 հազար հոգի բնակչություն ունեցող քաղաքներում՝ յուրաքանչյուր 350 բնակչությանը ընտրական մեկ ոկրուգ. մինչեվ 12 հազար հոգի բնակչություն ունեցող քաղաքներում կազմվում են ընտրական 35 ոկրուգ։

Թբիլիսի քաղաքում՝ բնակչության յուրաքանչյուր 1.000 հոգուն ընտրական 1 ոկրուգ։

Ավելի քան 20 հազար հոգի բնակչություն ունեցող քաղաքային շրջաններում բնակչության յուրաքանչյուր 500 հոգու համար կազմվում է ընտրական մեկ ոկրուգ, սակայն, ընտրական 250 ոկրուգից վոչ ավելի. մինչեվ 20 հազար հոգի բնակչություն ունեցող քաղաքային շրջաններում կազմվում են ընտրական 35 ոկրուգ։

Հոդված 43։ Քաղաքներում աշխատավորների դեպուտատների քաղաքային յեվ շրջանային Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակները հրապարակում ե քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային գործադիր կոմիտեն, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 44։ Յուրաքանչյուր քաղաքում յեվ քաղաքներում գտնվող շրջանում ստեղծվում ե աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհրդի ընտրությունների վերաբերյալ Քաղաքային, Շրջանային ընտրական հանձնաժողով։

Հոդված 45։ Քաղաքներում Քաղաքային յեվ Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների ու աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ հաստատվում են քաղաքներում հանրապետական յենթարկման Քաղաքային ընտրական հանձնաժողովը՝ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից. Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի մարզային յենթարկման քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի կողմից. շրջանային յենթարկման քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի կողմից. քաղաքներում Շրջանային ընտրական հանձնաժողովը՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհրդի կողմից հետեվյալ կազմով՝ նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար և 6—10 անդամ, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 46։ Քաղաքներում Քաղաքային, Շրջանային ընտրական հանձնաժողովը.

ա) հետեվում ե, վոր քաղաքի յեվ շրջանի տերիտորիայում քաղաքային, շրջանային Խորհրդի ընտրությունների ընթացքում անշեղ կերպով կատարվի ընտրությունների ներկա Կանոնադրությունը.

բ) քննում ե քաղաքներում աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովների վոչ ճիշտ գործողությունների դեմ ստացված գանգատները.

գ) հետեվում ե, վոր ընտրողների ցուցակները ժամանակին կազմվեն ու հասցվեն ի գիտություն ընդհանուրի.

դ) հետեվում ե, վոր աշխատավորների դեպուտատների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ժամանակին կազմակերպվեն ընտրական հանձնաժողովները. հանրապետական յենթարկման քաղաքներում սահմանում ե ընտրական տեղամասերի համարներն ըստ կարգի.

յե) պատրաստում ե ընտրական բյուլետենները ըստ աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհրդի ընտրությունների վերաբերյալ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձեվով.

զ) ցուցակագրում ե աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհրդի համար ընտրված դեպուտատներին.

ե) հանձնում ե ընտրությունների գործավարությունը աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհրդի մանդատային հանձնաժողովին։

Հոդված 47։ Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում ե Ոկրուգային ընտրական հանձնաժողով։

Հոդված 48։ Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհուրդների ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են հասարակական կազմակերպությունների ու աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ հաստատվում են աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքի շրջանային Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից հետեվյալ կազմով՝ նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար և 2—4 անդամ, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

Հոդված 49։ Աշխատավորների դեպուտատների, քաղաքում գտնվող շրջանային Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը.

ա) ցուցակագրում ե աշխատավորների դեպուտատների, քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային Խորհրդի դեպուտատության թեկնածուներին, կատարելով Վրացական ԽՍՀ Սահմանադրության յեվ ընտրությունների ներկա Կանոնադրության պահանջները.

բ) մատակարարում ե սահմանված ձեվի ընտրական բյուլետեններ տեղամասային ընտրական հանձնաժողովներին.

գ) պարզում ե ընտրությունների արդյունքներն ոկրուգում.

դ) վկայական ե տալիս ընտրված դեպուտատին՝ ընտրված լինելու մասին.

յե) ներկայացնում ե ընտրությունների գործավարությունը քաղաքային, շրջանային ընտրական հանձնաժողովին։

ԳԼՈՒԽ VI.

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 50։ Աշխատավորների դեպուտատների գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգ-

ների կազմակերպումը կատարում են աշխատավորների դեպուտատների գյուղական յեվ ավանային Խորհուրդները։

Ընտրական ոկրուգները Վրացական ԽՍՀ Սահմանադրության 88 հոդվածի հիման վրա կազմակերպվում են հետեվյալ նորմաներով.

հազար հոգուց ավելի բնակչություն ունեցող գյուղական Խորհուրդների յեվ ավանների տերիտորիայում՝ մեկ ընտրական ոկրուգ բնակչության յուրաքանչյուր 100 հոգուն, սակայն, վոչ ավելի, քան 25 ոկրուգ. մինչ 1.000 հոգի բնակչություն ունեցող գյուղխորհուրդներում յեվ ավաններում կազմակերպվում է 9 ընտրական ոկրուգ։

Հոդված 51. Աշխատավորների դեպուտատների գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակները հրապարակում են աշխատավորների դեպուտատների գյուղական յեվ ավանային Խորհուրդների գործադիր կոմիտեները, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 52։ Յուրաքանչյուր գյուղխորհրդում յեվ ավանում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողով։

Հոդված 53։ Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովները կազմակերպվում են հասարակական կազմակերպությունների յեվ աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ հաստատվում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից՝ նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի յեվ 2—4 անդամների կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

Հոդված 54։ Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողովը.

ա) գյուղխորհրդի յեվ ավանի տերիտորիայում հետեվում է՝ գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների ընթացքում ընտրությունների ներկա Կանոնադրության անշեղ իրագործմանը.

բ) քննում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական հանձնաժողովների վոչ ճիշտ գործողությունների նկատմամբ յեղած բողոքները.

գ) պատրաստում է ընտրական բյուլետեններ՝ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների համար սահմանված ձեվով յեվ ընտրական բյուլետեններ և մատակարարում տեղամասային ընտրական հանձնաժողովներին.

դ) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդում ընտրված դեպուտատներին.

յե) աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային

Խորհրդի մանդատային հանձնաժողովին և հանձնում ընտրությունների գործավարությունը։

Հոդված 55. Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի Ոկրուգային ընտրական հանձնաժողով։

Հոդված 56։ Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհուրդների ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմակերպվում են հասարակական կազմակերպությունների յեվ աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից յեվ հաստատվում աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի կողմից՝ նախագահի, քարտուղարի յեվ հանձնաժողովի մեկ անդամի կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

Հոդված 57։ Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովը.

ա) ցուցակագրում է առաջադրվածներին, հետեվելով Վրացական ԽՍՀ Սահմանադրության յեվ աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի դեպուտատության թեկնածուների ընտրության ներկա Կանոնադրության պահանջներին.

բ) սահմանում է ընտրությունների արդյունքներն ոկրուգում.

գ) ընտրված դեպուտատին տալիս է ընտրված լինելու վերաբերյալ վկայական.

դ) Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողովին և ներկայացնում ընտրությունների գործավարությունը։

ԳԼՈՒԽ VII.

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Հոդված 58։ Ընտրական բյուլետեններն ընդունելու յեվ ձայները հաշվելու համար քաղաքների, ավանների յեվ գյուղխորհուրդների տերիտորիան բաժանվում է ընտրական տեղամասերի, վորոնք ընդհանուր են աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունների համար։

Հոդված 59։ Ընտրական տեղամասեր կազմում են քաղաքներում աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդները, շրջանային բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների դե-

պուտատների շրջանային Խորհուրդները, գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդները։

Հոդված 60։ Ընտրական հանձնաժողովները կազմվում են վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

Հոդված 61։ Յերկու հազարից վոչ ավելի բնակչություն ունեցող գյուղխորհրդի տերիտորիան, վորպես կանոն, կազմում է ընտրական մեկ տեղամաս, 500-ից, բայց վոչ ավելի 2.000 հոգուց բնակչություն ունեցող յուրաքանչյուր գյուղական բնակավայրում կազմակերպվում է առանձին ընտրական տեղամաս։

2.000 հոգի բնակչություն ունեցող գյուղխորհրդի յեվ գյուղական բնակավայրի տերիտորիան բաժանվում է տեղամասերի՝ բնակչության 1.500—2.500 հոգուն ընտրական մեկ տեղամաս հաշվով։

500-ից պակաս, բայց 300 հոգուց վոչ պակաս բնակչություն ունեցող գյուղերում կամ գյուղերի խմբում՝ այն դեպքերում, յերբ այդ գյուղերի տարածությունը մինչեվ ընտրական տեղամասի կենտրոնը տաս կիլոմետրից անցնում է, կարող են կազմվել առանձին ընտրական տեղամասեր։

Առանձին շրջաններում, վորտեղ գերակշռում են մանր ավանները, ինչպես յեվ լեռնային ու քոչվորական շրջաններում ընտրական տեղամասերը կարող են կազմվել 300 հոգուց պակաս, բայց 50 հոգուց վոչ պակաս բնակչությամբ։

Հոդված 62։ 2.000 հոգուց ավելի բնակչություն ունեցող քաղաքներն ու ավանները բաժանվում են ընտրական տեղամասերի՝ բնակչության 1.500—2.500 հոգուն մեկ ընտրական տեղամաս հաշվով։

Հոդված 63։ Զորամասերն ու զորային միավորումները կազմում են առանձին ընտրական տեղամասեր՝ 50 ընտրողից վոչ պակաս յեվ 1.500-ից վոչ ավելի քանակությամբ։

Հոդված 64։ Հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, ինվալիդների տներին կից առնվազն 50 ընտրողների քանակով կազմվում են առանձին ընտրական տեղամասեր։

Մի քանի կորպուսներից բաղկացած հիվանդանոցներում թույլ է տրվում ընտրական տեղամասեր կազմել առանձին կորպուսներում, յեթե նրանցից յուրաքանչյուրում կան առնվազն 50 ընտրողներ։

Հիվանդանոցներում յեվ բուժական մյուս հիմնարկություններում, վորտեղ չեն կազմակերպվում առանձին ընտրական տեղամասեր, թույլ է տրվում ընտրական բյուլետեններն ընդունել հենց հիվանդանոցներում յեվ բուժական հիմնարկություններում՝ ընտրական հանձնաժողովների առանձնացրած անդամների կողմից։ Այդ դեպքում հիվանդանոցներին ժամանակավորվում են առանձին ընտրական արկղներ։

Հոդված 65։ Ընտրությունների որը լողացող նավերը կարող են առնվազն 25 ընտրողների քանակով կազմել առանձին ընտրական տեղամասեր, վորոնք մտնում են ընտրական ոկրուգների մեջ՝ ըստ նավի գրանցման տեղի։

Այն դեպքերում, յերբ նավի վրա ընտրողների քանակը հավասար է բնակչության նորմային, քաղաքներում աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ շրջանային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգի համար կազմվում է աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ շրջանային Խորհրդի ընտրությունների առանձին ընտրական ոկրուգ՝ ըստ նավի գրանցման տեղի։

Հոդված 66։ Հեռու տեղեր մեկնող մարդատար գնացքներում, վորոնք ընտրությունների որը գտնվում են հանապարհին, կազմվում են ընտրական տեղամասեր՝ «քվեարկության իրավունքի վկայական» ունեցող ուղեվոր ընտրողներից բյուլետեններ ընդունելու համար։

Հոդված 67։ Յուրաքանչյուր ընտրական տեղամասում ստեղծվում է Տեղամասային ընտրական հանձնաժողով, վորն ընդհանուր է աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունների գծով։

Հոդված 68։ Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից յեվ քաղաքներում հաստատվում են աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ շրջանային բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից հետեվյալ կազմով՝ նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար յեվ 6—10 անդամ, վոչ ուշ, քան ընտրություններից 45 որ առաջ։

Հոդված 69։ Տեղամասային ընտրական հանձնաժողովը.

ա) ընդունում է ընտրական բյուլետենները ընտրական տեղամասում.

բ) հաշվում է աշխատավորների դեպուտատների մարզային, շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհրդի դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուի ձայները.

գ) հանձնում է քվեարկության արձանագրությունը համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովին, իսկ ամբողջ գործավարությունը՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ շրջանային Խորհրդին։

ԳԼՈՒԽ VIII.

ԴԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 70։ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 154 հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներ են առաջադրվում ըստ ընտրական ոկրուգների։

Աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների թեկնածուներ առաջադրելու իրավունքով ապահովվում են աշխատավորության հասարակական կազմակերպությունները յեվ ընկերությունները՝ Կոմունիստական կուսակցության կազմակերպությունները, արհեստակցական միությունները, կոոպերատիվները, յերիտասարդության կազմակերպությունները, կուլտուրական ընկերությունները յեվ մյուս կազմակերպությունները, վորոնք արձանագրված են որենքով սահմանված կարգով։

Հոդված 71։ Թեկնածուներ առաջադրելու իրավունքը իրագործում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների յեվ ընկերությունների ինչպես կենտրոնական որգանները, նույնպես յեվ նրանց հանրապետական, մարզային յեվ շրջանային որգանները, հավասարապես յեվ ձեռնարկություններում ու հիմնարկություններում՝ բանվորների ու ծառայողների, զինվորական մասերում՝ կարմիրբանակայինների ընդհանուր ժողովները, ինչպես յեվ կոլտնտեսություններում՝ գյուղացիների, խորհտնտեսություններում՝ խորհտնտեսությունների բանվորների յեվ ծառայողների ընդհանուր ժողովները։

Հոդված 72։ Դեպուտատության թեկնածուները չեն կարող լինել Ոկրուգային, ինչպես նայեվ այն ոկրուգի Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները, վորտեղ նրանք առաջադրված են դեպուտատության թեկնածուներ։

Հոդված 73։ Վոչ ուշ, քան ընտրություններից 35 որ առաջ, աշխատավորների բոլոր հասարակական կազմակերպությունները յեվ ընկերությունները, վորոնք առաջադրում են աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի) յեվ շրջանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ, պարտավոր են դեպուտատության թեկնածուներին գրանցել համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովում։

Հոդված 74։ Վոչ ուշ, քան ընտրություններից 20 որ առաջ, աշխատավորների բոլոր հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները, վորոնք առաջադրում են աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդների, քաղաքներում գտնվող շրջանային Խորհուրդների, գյուղական յեվ ավանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ, պարտավոր են դեպուտատության թեկնածուներին գրանցել համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովում։

Հոդված 75։ Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել դեպուտատության բոլոր թեկնածուներին, վորոնց առաջադրել են աշխատավորների հասարակական կազմակերպությունները յեվ ընկերությունները, պահպանելով Վրացական ԽՍՀ Սահմանադրության յեվ ընտրությունների վերաբերյալ ներկա Կանոնադրության պահանջները։

Հոդված 76։ Դեպուտատության թեկնածու առաջադրող աշխատավորների հասարակական կազմակերպությունը կամ ընկերությունը պարտավոր է համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել հետեվյալ փաստաթղթերը.

ա) դեպուտատության թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի արձանագրությունը՝ ստորագրված Նախագահության անդամների կողմից, նշելով նրանց տարիքը, բնակավայրը, թեկնածուին առաջադրող կազմակերպության անունը, նշումներ՝ ժողովի կամ նիստի տեղի, ժամանակի յեվ մասնակիցների քանակի մասին, նիստի, վոր առաջադրել է դեպուտատության թեկնածու, ըստ վորում՝ արձանագրության մեջ պետք է նշվեն դեպուտատության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա տարիքը, բնակավայրը, կուսակցականությունը, զբաղմունքը.

բ) դեպուտատության թեկնածուի հայտարարությունը, թե ինքը համաձայն է քվեարկվելու տվյալ ընտրական ոկրուգում իրեն առաջադրած կազմակերպության կողմից։

Հոդված 77։ Աշխատավորների դեպուտատների Խորհրդի դեպուտատության թեկնածուն միյեվնույն Խորհրդի համար կարող է քվեարկվել միայն մեկ ոկրուգում։

Հոդված 78։ Աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովի մերժումը դեպուտատության թեկնածուին գրանցելուց, կարող է բողոքարկվել յերկու որվա ժամկետում համապատասխան Մարզային, Շրջանային, Քաղաքային, քաղաքներում գտնվող Շրջանային, Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովին, վորի վճիռը վերջնական է։

Հոդված 79։ Աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային Խորհրդի դեպուտատության թեկնածու գրանցված յուրաքանչյուրի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունն ու թեկնածուին առաջադրող հասարակական կազմակերպության անու-

նը համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվում է վոչ ուշ, քան ընտրություններից 30 որ առաջ։

Ոկրուգային հանձնաժողովների կողմից աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ գրանցվածների վերաբերյալ տվյալները հրապարակում է համապատասխան Քաղաքային, քաղաքներում գտնվող Շրջանային, Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովը, վոչ ուշ, քան ընտրություններից 15 որ առաջ։

Հոդված 80։ Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների բոլոր դեպուտատության թեկնածու գրանցվածները պարտադիր կերպով պետք է մտցվեն ընտրական բյուլետենների մեջ։

Հոդված 81։ Աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային յեվ քաղաքներում շրջանային Խորհուրդների ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները, ինչպես յեվ գյուղական ու ավանային ընտրական հանձնաժողովները պարտավոր են ուղարկել տեղամասային ընտրական բոլոր հանձնաժողովներին ընտրական բյուլետեններ, վոչ ուշ, քան ընտրություններից 10 որ առաջ։

Հոդված 82։ Ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական ոկրուգի բնակչության լեզուներով։

Հոդված 83։ Ընտրական բյուլետենները տպագրվում են Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից սահմանված ձեվով յեվ բոլոր ընտրողներին ընտրական բյուլետեններ մատակարարելն ապահովող քանակով։

Հոդված 84։ Յուրաքանչյուր կազմակերպություն, վորն առաջադրել է համապատասխան ընտրական ոկրուգում գրանցված թեկնածու, հավասարապես յեվ Վրացական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացի, ապահովվում է այդ թեկնածուի համար ժողովներում, մամուլում յեվ այլ յեղանակներով անարգել կերպով ագիտացիա մղելու իրավունքով, համաձայն Վրացական ԽՍՀ Սահմանադրության 138 հոդվածի։

ԳԼՈՒԽ IX

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԸ

Հոդված 85։ Աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում գտնվող շրջանային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունները կատարվում են մեկ որվա ընթացքում, վորն ընդհանուր է Վրացական ԽՍՀ համար։

Հոդված 86։ Ընտրությունների որը սահմանում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, վոչ ուշ, քան ընտրությունների ժամկետից յերկու ամիս առաջ։ Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային որ։

Հոդված 87։ Ընտրություններից առաջ վերջին 15 որերի ընթացքում ամեն որ Տեղամասային ընտրական հանձնաժողովը հրապարակում կամ վորյեվե այլ յեղանակով ընտրողներին լայնորեն ծանուցում է ընտրությունների որվա յեվ ընտրությունների տեղի մասին։

ԳԼՈՒԽ X.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 88։ Ընտրողները ձայն ՝ են տալիս ընտրությունների որը առավոտյան ժամը 6-ից մինչեվ գիշերվա ժամը 12-ը՝ տեղական ժամանակով։

Հոդված 89։ Ընտրությունների որը, առավոտյան ժամը վեցին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում է ընտրական արկղները յեվ ընտրողների՝ սահմանված ձեվով կազմված ցուցակի առկայությունը, վորից հետո փակում յեվ կնքում է արկղները հանձնաժողովի կնիքով յեվ հրավիրում է ընտրողներին անցնել քվեարկության։

Կնիքների յեվ ընտրական արկղների նմուշները սահմանում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը։

Հոդված 90։ Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, դրա համար ներկայանալով քվեարկության համար հատկացված շենքը, ըստ վորում ընտրողները ձայները տալիս են ընտրական բյուլետենները ընտրական արկղի մեջ գցելու միջոցով։

Հոդված 91։ Ընտրությունների շենքում բյուլետենները լցնելու համար առանձնացվում է հատուկ սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ արգելվում է վորյեվե սեկի, այդ թվում նայեվ Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությունը, բացի քվեարկողներից՝ բյուլետենները լրացնելու համար միաժամանակ մի քանի ընտրողների ներս թողնելիս, սենյակը պետք է կահավորված լինի միջնորմներով կամ շիրմաներով՝ միաժամանակ ներս թողնվող ընտրողների թվի համեմատ։

Հոդված 92։ Ընտրական շենքը յեկած ընտրողը Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին ներկայացնում է կամ անձնագիրը, կամ կոլտնտեսային գրքույկը, կամ արհմիութենական տոմսը, կամ անձնական վորյեվե այլ վկայական յեվ ընտրողների ցուցակում ստուգվելուց յեվ ընտրողների ցուցակում

նշվելուց հետո ստանում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ։

Հոդված 93։ Ընտրությունների շենքը «քվեարկության իրավունքի վկայականով» ներկայացած անձերի վերաբերմամբ, ընտրությունների ներկա Կանոնադրության 21 հոդվածի համաձայն, Տեղամասային ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցակ է կազմում, վորը կցվում է ընտրողների ցուցակին։

Հոդված 94։ Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողը յուրաքանչյուր ընտրական բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, վորին ձայն է տալիս ինքը, ջնջելով մյուսներինը. դրանից հետո, ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը, յեվ ընտրական բյուլետենները գցում է ընտրական արկղի մեջ։

Հոդված 95։ Անգրագիտության կամ ֆիզիկական վորևվե թերության պատճառով ընտրական բյուլետենները ինքնուրույն կերպով լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողներն իրավունք ունեն ընտրական բյուլետենները լրացնելու համար ուզած՝ մեկ ուրիշ ընտրողին հրավիրել այն սենյակը, վորտեղ լրացվում են ընտրական բյուլետենները։

Հոդված 96։ Ընտրական շենքում ձայն տալու ժամանակ ընտրական ագիտացիա չի թույլատրվում։

Հոդված 97։ Ընտրական շենքում կարգ ու կանոնի համար պատասխանատու է Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, յեվ նրա կարգադրությունները բոլոր ներկա գտնվողների համար պարտադիր են։

Հոդված 98։ Ընտրությունների որը, գիշերվա ժամը 12-ին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությունը հայտարարում է ավարտված, յեվ հանձնաժողովը սկսում է բանալ ընտրական արկղները։

ԳԼՈՒԽ XI.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հոդված 99։ Այն շենքում, վորտեղ Տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, ձայները հաշվելիս իրավունք ունեն ներկա լինելու աշխատավորների հասարակական կազմակերպությունների յեվ ընկերությունների հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես յեվ մամուլի ներկայացուցիչները։

Հոդված 100։ Տեղամասային ընտրական հանձնաժողովը, բաց անելով քվեատուփերը, հաշվում է բյուլետեններն ըստ ոկրուգների, համեմատում է տրված բյուլետենների թիվը քվեարկության մասնակցած անձնավորությունների թվի հետ (բյուլետեններն ստանալիս ընտրողների ցուցակում կատարված նշումների հիման վրա) յեվ համեմատության արդյունքները մտցնում քվեարկության արձանագրությունների մեջ ըստ յուրաքանչյուր ընտրական ոկրուգի։

Հոդված 101։ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հայտարարում է քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր բյուլետենի։

Հոդված 102։ Անվավեր են ճանաչվում այն բյուլետենները, վորոնց մեջ քվեարկելիս թողնված է մեկ թեկնածուից ավելի, ինչպես յեվ չսահմանված տեսակի յեվ գույնի բյուլետենները։

Հոդված 103։ Ընտրական բյուլետենի վավերականության նկատմամբ կասկածներ ծագելիս, հարցը լուծում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության միջոցով, վոր նշվում է արձանագրության մեջ։

Հոդված 104։ Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով յուրաքանչյուր ընտրական ոկրուգի համար կազմում է քվեարկության արձանագրություն յերկու որինակ, ստորագրված Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների, այդ թվում անպայման նախագահի յեվ քարտուղարի կողմից։

Հոդված 105։ Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արձանագրության մեջ պետք է նշված լինեն.

ա) ձայներ տալն սկսելու յեվ ավարտելու ժամանակը.

բ) ընտրողների թիվը ընտրական տեղամասում յեվ ոկրուգներում.

գ) ընտրողների ցուցակի համաձայն ձայն տված ընտրողների թիվը.

դ) «քվեարկության իրավունքի վկայականներով» ձայն տված ընտրողների թիվը.

յե) ընտրական տեղամասում յեվ շրջաններում տրված բյուլետենների թիվը.

զ) Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների ու գանգատների յեվ Տեղամասային ընտրական հանձաժողովի կողմից ընդունված վորոշումների համառոտ շարադրումը.

ե) ձայները հաշվելու արդյունքներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի։

Հոդված 106։ Ձայները հաշվելը յեվ արձանագրությունները

կազմելն ավարտելուց հետո, Տեղամասային հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր ոկրուգի, հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ։

Հոդված 107։ Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության արձանագրության մեկ որինակը սուրհանդակի հետ 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։

Հոդված 108։ Բոլոր ընտրական քյուլետենները (առանձին վավերականներն ու առանձին անվավեր ճանաչվածները) պետք է կնքվեն Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով յեվ քվեարկության արձանագրությունների յերկրորդ որինակների ու կնիքի հետ միասին Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից պահելու հանձնվեն՝ քաղաքներում—աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդներին, իսկ շրջանային բաժանում ունեցող քաղաքներում—աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդներին, գյուղական վայրերում—աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդներին։

Հոդված 109։ Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների վրա պարտականություն է դրվում՝ պահել ընտրական քյուլետենները առաջիկայում մինչ յուրաքանչյուր ոկրուգի դեպուտատների մանդատների հաստատումը՝ աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհրդի կողմից։

Հոդված 110։ Աշխատավորների դեպուտատների մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում գտնվող շրջաններում, գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները սահմանում են ընտրությունների արդյունքներն ոկրուգում, Տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

Հոդված 111։ Այն շենքում, վորտեղ Ոկրուգային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, ձայները հաշվելիս ներկա լինելու իրավունք ունեն աշխատավորների, հասարակական կազմակերպությունների յեվ ընկերությունների հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես յեվ մամուլի ներկայացուցիչները։

Հոդված 112։ Ոկրուգային ընտրական հանձնաժողովը Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձեվով կազմում է քվեարկության արձանագրություն յերկու որինակ, ստորագրված Ոկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների, այդ թվում անպայման նախագահի յեվ քարտուղարի կողմից։

Հոդված 113։ Ոկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է մատնանշված լինեն.

ա) ընտրողների ընդհանուր թիվն ոկրուգում.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուի ոգտին տրված ձայների թիվը.

դ) Ոկրուգային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների ու գանգատների համառոտ շարադրումը յեվ Ոկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

Հոդված 114։ Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրությունների ընտրական հանձնաժողովների նիստերը համարվում են որինական, յեթե նրանց մասնակցում են հանձնաժողովի ընդհանուր կազմի կեսից ավելին։

Հոդված 115։ Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում գերակշռություն է տալիս նախագահի ձայնը։

Հոդված 116։ Ձայների հաշվումն ավարտելուց հետո, վոչ ուշ, քան 24 ժամում Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է արձանագրությունը, կնքված ձեվով, սուրհանդակի միջոցով ուղարկել Մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), Շրջանային, Քաղաքային, Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովին։

Հոդված 117։ Աշխատավորների դեպուտատների Խորհրդի դեպուտատության այն թեկնածուն, վորն ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ ոկրուգում տրված յեվ վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում է ընտրված։

Հոդված 118։ Արձանագրությունն ստորագրելուց հետո Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը կարդում է ընտրությունների արդյունքները յեվ ընտրվելու մասին վկայական է տալիս դեպուտատության ընտրված թեկնածուին։ Ընտրվելու մասին վկայականի ձեվը սահմանվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից։

Հոդված 119։ Յեթե ոկրուգում թեկնածուներից վոչ մեկը չի ստացել ձայների բացարձակ մեծամասնություն, համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին առանձնապես նշում է արձանագրության մեջ յեվ հաղորդում է Մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), Շրջանային, Քաղաքային, քաղաքներում գտնվող Շրջանային, Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովին, յեվ միաժամանակ հայտարարում է այն յերկու թեկնածուների վերաքվեարկումը, վորոնք ստացել են ամենամեծ

քանակությամբ ձայներ, ինչպես յեվ նշանակում է վերաքվեարկության որը, վոչ ուշ, քան ընտրությունների առաջին տուրը լրանալուց հետո՝ յերկու շաբաթվա ժամկետում։

Հոդված 120։ Յթե ոկրուգում տրված ձայների քանակը կազմում է այդ ոկրուգում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից պակաս, Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին առանձնապես նշում է արձանագրության մեջ յեվ անհապաղ հաղորդում է համապատասխան Մարզային (Հարավ-Ոսեթիայի ինքնավար մարզի), Շրջանային, Քաղաքային, քաղաքներում գտնվող Շրջանային, Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովին, ըստ վորում այդ դեպքում Մարզային, Շրջանային, Քաղաքային, քաղաքներում գտնվող Շրջանային, Գյուղական յեվ Ավանային ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություններ՝ առաջին ընտրություններից հետո, վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ժամկետում։

Հոդված 121։ Դեպուտատության թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես յեվ անվավեր ճանաչված ընտրությունների փոխարեն նորերը, կատարվում է ընտրողների առաջին ընտրությունների համար կազմված ցուցակներով յեվ ընտրությունների ներկա Կանոնադրության լիովին համապատասխան։

ԳԼՈՒԽ XII.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 122։ Ամեն վոք, ով բռնության, խաբեբայության, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով խանգարի Վրացական ԽՍՀ քաղաքացուն՝ իրագործելու Վրացական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Խորհուրդներում ընտրելու յեվ ընտրվելու իրավունքը, —պատժվում է ազատազրկումով մինչեվ յերկու տարի ժամկետով։

Հոդված 123։ Խորհրդի պաշտոնատար անձնավորությունը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կեղծել է ընտրական փաստաթղթերը, կամ կատարել է ձայների վոչ ճիշտ հաշվում, պատժվում է ազատազրկումով մինչեվ յերեք տարի ժամկետով։

Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝
Ֆ. Մախարաձե

Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության քարտուղար՝
Վ. Եգնատաշվիլի

Խմբագիր՝ **Սեն. Վարդանյան**
Սրբագրիչ՝ **Մ. Շատվորյան**

Տպագրված է Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան «Զարյա Վոստոկա» հրատ. տպարանում։ Թբիլիսի, Ռուսթավելի պող. № 36։

Պատվեր 2534 Գրավիտ Դ—1116 Քանակ 25.000

ՀՀ Ազգային գրադարան
NL0200703

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

35. 705